ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

4 փետրվարի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

6
(3215)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՊԵԿ ՆԱՎ ՊԵՏԸ ՀԱՐՑԱՔՆՆՎԵԼ Է

Անցած տարվա հունիսի 2-ին ՊԵԿ նախագահի մտերիմ ընկեր, նախկին քննիչ եւ դատախազ Գառնիկ Մարգարյանը նշանակվեց ՊԵԿ ներքին անվտանգության վարչության պետ:

Այս տարվա հունվարի 15-ին ՀՀ ՊԵԿ-ը տեղեկացրեց, որ մաքսանենգ ճանապարհով բջջային հեռախոսներ Հայաստան ներկրելու գործով ձերբակալված անձանց մասով քրեական վարույթը նախաձեռնվել է Պետական եկամուտների կոմիտեի կողմից՝ ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեին փոխանցված տեղեկատվության հիման վրա: ՊԵԿ-ն ավելի վաղ հայտնել էր, որ մաքսանենգ ճանապարհով բջջային հեռախոսներ Հայաստան ներկրելու վերաբերյալ Պետական եկամուտների կոմիտեում բացվել էր ծառայողական քննություն:

Սրան նախորդել էր https://armlur.am/1536182/?utm_source=chatgpt.com մեր հրապարակումը Երեւան-Մոսկվա ուղղությամբ տեղափոխվող ոսկու ձուլակտորների մասին:

Եւ հիմա «Ժողովուրդ» օրաթերթի իրավապահ աղբյուրները փոխանցում են, որ ՊԵԿ ՆԱՎ-ի պետ Գառնիկ Մարգարյանը հրավիրվել եւ հարցաքննվել է ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեում այս վարույթների շրջանակում:

«Ժողովուրդ»-ին, Հակակոռուպցիոն կոմիտեից ի պատասխան, ասացին, որ իրենց մոտ քննվող քրեական վարույթներով հարցաքննվող անձանց վերաբերյալ տեղեկատվություն չեն կարող տրամադրել:

Հավելենք, որ համակարգում լուրջ խմորումների մասին են ակնարկում՝ մտավախություն հայտնելով, որ իրավապահները փորձում են մաքրել հնարավոր պատասխանատվությունից որոշ բարձրաստիճան պաշտոնյաների:

Մենք կհետեւենք իրադարձությունների զարգացմանը:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթով իրականացված նախաքննությամբ պարզվել է, որ Գեղարքունիքի մարզի Դպրաբակ համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած անձը, պաշտոնեական դիրքն օգտագործելով, խմբի կազմում, հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրն ու պատկանելությունը թաքցնելու եղանակով օրինականացրել է այն: Մասնավորապես, նախաքննությամբ պարզվել է, որ վերջինս, 2013 թվականի ապրիլին տեղեկանալով, որ համապատասխան ընկերությունը համայնքում բջջային կապի կայան տեղադրելու համար ցանկանում է վարձակալության նպատակով հողամաս ձեռք բերել, նպատակադրվել է նախապես որոշված անշարժ գույքը օրենքի խախտմամբ հանել համայնքի հաշվեկշռից եւ գրանցել եղբոր անվամբ՝ այդ կերպ կազմակերպելով այն փաստացի իրենը դարձնելու գործընթացը: Հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով պաշտոնատար անձը կազմակերպել եւ անցկացրել է հողամասի աճուրդ-վաճառք եւ խախտելով օրենքով սահմանված կարգով աճուրդի իրականացման կարգը՝ աճուրդին մասնակից է դարձրել նաեւ եղբորն ու հողամասը վաճառել նրան:

Մանրամասները՝ «ԱրմԼուր.էյէմ» կայքում



ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ «Մեր ձեւով» շարժումն այս օրերին վարչապետի թեկնածուի քննարկումների մեջ է: Ու կարծես թե վարչապետի թեկնածուն Նարեկ Կարապետյանը չէ, այլ թեկնածու ունեն: Դեռեւս ոչ ոք չի ցանկանում գաղտնազերծել թեկնածուին: Դեռ նախորդ տարվանից նախընտրական փուլում մղվող քաղաքական պայքարում օր օրի նոր ուժեր ու շարժումներ են ձեւավորվում, որոնք հետագայում մտադիր են մասնակցել խորհրդարանական ընտրություններին: Նրանցից մեկն էլ «Մեր ձեւով» շարժումն է, իսկ շարժման առաջնորդը՝ Սամվել Կարապետյանը: Վերջինս գրեթե 8 ամիս է՝ գտնվում է կալանքում: Նշենք, որ «Մեր ձեւով» շարժման համակարգող Նարեկ Կարապետյանն այս օրերին հայտարարեց, որ փետրվարի 12-ին կհայտարարեն վարչապետի իրենց թեկնածուի անունը, որը, ըստ տեղեկությունների, ինքը չէ: Հարկ է նշել, որ ArmLur.am-ի տեղեկություններով՝ «Մեր ձեւով» շարժումը փետրվարի 12-ին համագումարն անցկացնելու է Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, որի համար, Համալիրի տնօրենի փոխանցմամբ, կվճարի ** դրամ:

Շարունակությունը՝ «ԱրմԼուր.էյէմ» կայքում

Հունվարի 20-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը հյուրընկալել էր «Զայեդ» մարդկային եղբայրության մրցանակի գլխավոր քարտուղար Մուհամմադ Աբդելսալամին, մրցանակի հանձնաժողովի անդամների եւ այլ անդամների: Մուհամմադ Աբդելսալամը շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար եւ նշել, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ճանաչվել է «Զայեդ» մարդկային եղբայրության 2026 թվականի մրցանակակիր՝ի նշանավորումն Հայաստանի Հանրապետության ու Ադրբեջանի Հանրապետության միջեւ խաղաղության հաստատման, տարածաշրջանում համագործակցության եւ կայունության ապահովման օրակարգը հետեւողականորեն առաջ մղելու համար: ArmLur.am-ը տեղեկանում է, որ այս հանդիպման շրջանակներում Մուհամմադ Աբդելսալամի կողմից ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը թանկարժեք նվեր է ստացել: «Զայեդ» մարդկային եղբայրության մրցանակի գլխավոր քարտուղարը Միրզոյանին 228 հազար 900 դրամ արժեքով արարողակարգային նվեր է տվել՝ գրիչ, որն էլ նախարարը հայտարարագրել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նվերների ռեեստրում:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՈՉ ԴԱՏԱՎՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՎԱՏԹԱՐԱՆԱԼՈՒ Է»

Դատական համակարգին շարունակում է մտահոգել «ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» նախագիծը, որով ակնհայտորեն սահմանափակվում են դատավորների անկախության երաշխիքները: Մասնավորապես, նոր նախագծով առաջարկվում է դատավորների նկատմամբ վարույթ հարուցելու համար ընդամենը 4 կողմ ձայն՝ 11 անդամից: Տեղեկացնենք, որ այս պահին հանձնաժողովը բաղկացած է 8 անդամից, որից 6-ը դատավոր են, 2-ը՝ ոչ դատավոր անդամներ, որոնք ընտրվում են Դատավորների ընդհանուր ժողովի կողմից: Մենք զրուցեցինք Իրավաբանական գիտությունների թեկնածու, Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի նախկին ղեկավար Լիպարիտ Գրմեյանի հետ:

-Ձեր գնահատմամբ՝ արդյո՞ք դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու շեմի իջեցումը (11 անդամից ընդամենը 4 կողմ ձայն) համատեղելի է դատավորների անկախության սահմանադրական երաշխիքների հետ, հատկապես հաշվի առնելով, որ այդ ձայները կարող են ապահովվել ոչ դատավոր անդամների կողմից: Ավելին, արդյո՞ք ԲԴԽ-ին կից էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի կազմի փոփոխությունը՝ ոչ դատավոր անդամների թվի ավելացման հաշվին, չի ստեղծում գործադիր կամ քաղաքական ազդեցության ռիսկեր դատական իշխանության նկատմամբ, եւ ինչպե՞ս է սա համադրվում իշխանությունների բաժանման սկզբունքի հետ:

-Նախագծով առաջարկվող փոփոխությամբ, որով ավելացվում է էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամների թիվը ինքնին խնդրահարույց չէ: Մտահոգիչ է այն, որ առաջարկվող փոփոխության համաձայն՝ ընդամենը չորս անդամների ձայներով հնարավոր է հարուցել կարգապահական վարույթ: Վարույթի հարուցման շեմի իջեցումը մտահոգիչ է: Ընդհանրապես, դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար վարույթ հարուցելը բարձր շեմ պետք է ունենա, քանի որ այն առաջին հերթին երաշխիք է դատավորների անկախության առումով:

-Ձեր կարծիքով, կարգապահական վարույթ հարուցելու եւ այն ԲԴԽ ուղարկելու շեմերը որքանո՞վ են իրավաչափ ու համաչափ, եւ արդյոք միջազգային պրակտիկայում ընդունված է նման ցածր շեմերով դատավորների նկատմամբ վարույթներ հարուցելը:

-Ըստ նախագծում բերված հիմնավորումների՝ չպետք է պաշտպանվի որեւէ կորպորատիվ շահ: Սակայն, եթե այս կանխավարկածից ելնելով դիտարկենք առաջարկվող կարգավորումը, ապա փաստացի հայտնվում ենք հակառակ ծայրահեղության մեջ. առաջարկվող նախագծի արդյունքում ստեղծվում է մի իրավիճակ, երբ կարգապահական վարույթ կարող է հարուցվել միայն ոչ դատավոր չորս անդամների որոշմամբ: Այսինքն՝ մի ծայրահեղությունից փաստացի անցում է կատարվում մյուս ծայրահեղության, երբ թե տեսականորեն, թե պրակտիկ առումով ոչ դատավոր անդամները մշտապես կարող են հաղթահարել մեծամասնություն կազմող անդամներին:

-Կարո՞ղ է արդյոք հասարակական սեկտորի ներկայացուցիչների միջոցով իրականացվել անուղղակի ճնշում դատավորների վրա, եթե կարգապահական վարույթ հարուցելու համար բավարար է ոչ դատավոր անդամների գրեթե միաձայն դիրքորոշումը:

-Հնարավոր է նման իրավիճակ, եւ վարույթ հարուցելու շեմի իջեցումը հենց դրա ցուցիչն է:

-Միջազգային չափանիշների համատեքստում ինչպե՞ս են նման կարգավորումները համադրվում Եվրոպական դատարանի, Վենետիկի հանձնաժողովի եւ այլ միջազգային կառույցների ձեւավորած չափանիշների հետ դատավորների անկախության հարցում: Ձեր գնահատմամբ՝ կարո՞ղ են այս փոփոխությունները ապագայում դառնալ միջազգային ատյաններում ՀՀ դեմ վարույթների հիմք, մասնավորապես արդար դատաքննության իրավունքի խախտման տեսանկյունից:

-Միջազգային պրակտիկան կարող է տարբեր լինել, եւ միջազգային պրակտիկայում պետությունների հայեցողությանը թողնված է նման շեմերի սահմանումը: Բայց ելակետն է կարեւոր, թե ինչ շահ է հետապնդում նման կարգավորումը: Նախագծով սահմանվում է դատավորների անկախության եւ անկախ դատական համակարգի ապահովման եւ դրան ուղղված քայլերի կատարման անհրաժեշտությունը, որպես փոփոխության ելակետ: Առաջարկվող տարբերակը մի կողմից հանդիսանում է ողջունելի քայլ, որով ավելացվում է հանձնաժողովի անդամների քանակը, սակայն դրան զուգահեռ՝ հարուցման ձայների շեմի նվազեցումը կարող է առաջ բերել լուրջ ռիսկեր: Նախագծի հիմնավորման մեջ որպես ռիսկ է նշվում դատավորների կորպորատիվ շահը, որի դեմ պայքարին ուղղված է հենց այս նախագիծը: Մինչդեռ վարույթների հարուցման ցածր շեմ սահմանելով՝ նախագիծն ինքը առաջ է բերում նոր ռիսկ, ինչպես վերեւում արդեն նշեցի:

Ինչ վերաբերում է միջազգային չափանիշներին, ապա պետք է նշեմ, որ ցանկացած միջամտություն կարող է օրինաչափ համարվել, եթե կա իրավաչափ նպատակ, այդ նպատակին հասնելու համար հավասարակշռված միջոցների կիրառում, եւ այդ կոնտեքստում՝ այո, կարգավորումը կարող է համահունչ լինել Հայաստանի Սահմանադրությանը:

Այս օրենքի փոփոխության նախագծում մենք ունենք մի կողմից հռչակված նպատակ՝ այն է էթիկայի հանձնաժողովում դատավորների կորպորատիվ շահերի դեմ պայքարը, այսինքն՝ թույլ չտալ, որ դատավոր անդամները որոշումներ կայացնելու ժամանակ իրենց քանակական առավելությամբ հիմնականում կայացնեն որոշումներ, որոնք սպասարկում են դատական իշխանությանը: Սակայն մյուս կողմից առաջարկվող կարգավորումները այլ ծայրահեղություն են առաջ բերում: Իսկ եթե սրան ավելացնենք հնարավոր հետադարձությունը, որը բացասաբար է անդրադառնալու արդեն գործող անդամների վրա, ապա ընտրված միջոցը դառնում է ոչ համաչափ միջամտություն եւ նպատակին հասնելու ոչ անհրաժեշտ միջոց: Հետեւաբար կարծում եմ, որ որոշ փոփոխություն անհրաժեշտ է կատարել առաջարկված նախագծում, իսկ հետադարձության մասով շատ ճիշտ կլիներ, եթե այդ փոփոխությունը նախագծում, այնուամենայնիվ, առաջինից երկրորդ ընթերցման ժամանակ չավելացվեր:

Զրուցեց ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

Ե՞ՐԲ ԵՆ ՓԱԿԵԼՈՒ

Երեւանի Նաիրի Զարյան 17Ա հասցեում գտնվող Արցախի Հանրապետության ներկայացուցչության շենքը փակելու կամ Արցախի իշխանություններից վերջնականապես խլելու մտահոգությունները դեռ չեն մարվում: Նշենք, որ մինչ այս մենք հայտնել էինք, որ Արցախի պաշտոնյաների համար սպասելի է շենքի շուրջ տհաճ անակնալներ ունենալ:

Արցախի Հանրապետության նախկին պետնախարար ու Մարդու իրավունքների նախկին պաշտպան Արտակ Բեգլարյանը ArmLur.am-ի հետ զրույցում նշեց, որ նման իրավիճակի պետք է սպասել մինչեւ մայիս կամ դրանից հետո:

Արցախցի փաստաբան Ռոման Երիցյանն էլ հայտնել է, որ ՀՀ-ում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցչության շենքից Արցախի Հանրապետությանը սեփականազրկելու վերաբերյալ ՀՀ դատախազության հարցի հիման վրա քննվող գործով ՀՀ վարչական դատարանի նախագահ Կարեն Զարիկյանը կտրականապես հրաժարվում է Արցախի Հանրապետությանը կամ ԱՀ Կառավարությանը ներգրավել երրորդ անձ՝ փաստացի պատճառաբանելով, որ նրա համար Արցախի Հանրապետություն, ԼՂՀ կառավարություն գոյություն չունեն:

«Ամփոփ ասած՝ քննվում է սեփականազրկման հարց՝ առանց գրանցված իրավատիրոջը գործով մասնակից դարձնելու»,- ընդգծել է փաստաբանը եւ հավելել, որ գործն ըստ էության լուծող դատական ակտը հրապարակվելու է 2026 թվականի մայիսի 22-ին:

Հիշեցնենք, որ գլխավոր դատախազությունը 2025 թվականի հուլիսի 15-ին Կադաստրի կոմիտեի դեմ հայց էր ներկայացրել Վարչական դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել Երեւանի Նաիրի Զարյան 17Ա հասցեում գտնվող գույքի նկատմամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Ինչպես հայտնի է՝ գույքի նկատմամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սեփականության իրավունքը գրանցվել է 2017թ. մարտի 20-ին:

Նշենք նաեւ այն, որ տվյալ գույքը տարիներ շարունակ Հայաստանի Հանրապետությունում եղել է Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցչության շենքը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՄՆՈՒՄ Է ՀԱՊԿ ԱՆԴԱՄ

Հայաստանը մնում է ՀԱՊԿ անդամ՝ բոլոր իրավունքներով եւ պարտավորություններով, եւ Մոսկվան աջակցում է Երեւանի լիիրավ մասնակցությանը կազմակերպությանը: Այս մասին նշվում է Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության՝ լրատվամիջոցների հարցերին տված պատասխաններում:

«Հայաստանը մնում է ՀԱՊԿ անդամ՝ բոլոր իրավունքներով եւ պարտավորություններով: Մենք աջակցում ենք Երեւանի լիիրավ մասնակցությանը կազմակերպության աշխատանքներին, քանի որ դա երկրի անվտանգության անբաժանելի մասն է»,-նշել է դիվանագիտական գերատեսչությունը:

ԼԱՎ ԼՈՒՐԵՐ ԵՆ ՍՊԱՍՎՈՒՄ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը կարծում է, որ ռուս-ուկրաինական հակամարտության կարգավորումը լավ է ընթանում, եւ շուտով կարելի է դրական նորություններ ակնկալել: Այս մասին նա ասել է լրագրողների հետ զրույցում, որի տեսանյութը տարածել է Սպիտակ տունը:

«Կարծում եմ՝ Ուկրաինայի եւ Ռուսաստանի հետ կապված գործերը շատ լավ են ընթանում: Ես առաջին անգամ եմ այդ մասին ասում: Կարծում եմ՝ մենք կարող ենք լավ լուրեր ակնկալել», - ասել է Թրամփը:

Միեւնույն ժամանակ նա կրկին նշել է, որ ռուս-ուկրաինական հակամարտության կարգավորումը բարդ է:

Փետրվարի 2-ին հայտնի է դարձել, որ անվտանգության հարցերով ԱՄՆ-Ռուսաստան-Ուկրաինա եռակողմ աշխատանքային խմբի բանակցությունների երկրորդ փուլը տեղի կունենա փետրվարի 4-5-ը Աբու Դաբիում:

ԱՄՆ-ի, ՌԴ-ի եւ Ուկրաինայի եռակողմ բանակցությունների առաջին փուլը տեղի է ունեցել հունվարի 23-24-ը կրկին ԱՄԷ մայրաքաղաքում:

Սպիտակ տունը հայտարարել է, որ այդ բանակցությունները բացառիկ կարեւոր նշանակություն են ունեցել ռուս-ուկրաինական ճգնաժամի լուծման համար:

ԱՐԱՂՉԻՆ ԵՎ ՈՒԻԹՔՈՖԸ ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ

ԱՄՆ նախագահի հատուկ բանագնաց Սթիվ Ուիթքոֆը եւ Իրանի արտգործնախարար Աբբաս Արաղչին, ամենայն հավանականությամբ, փետրվարի 6-ին կհանդիպեն Ստամբուլում: Այս մասին հաղորդում է Axios լրատվական հարթակը՝ վկայակոչելով իրավիճակին ծանոթ աղբյուրների:

Ըստ նրանց՝ հանդիպման ընթացքում կողմերը կկենտրոնանան փաթեթային համաձայնագրի վրա, որը կկանխի պատերազմը: Ըստ Սպիտակ տան պաշտոնյայի, որի անունը չի նշվում, ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի վարչակազմը հույս ունի, որ Իրանը հանդիպման կգա՝ պատրաստ գնալու անհրաժեշտ փոխզիջումների:

Սա կլինի առաջին հանդիպումը ԱՄՆ-ի եւ Իրանի պաշտոնյաների միջեւ 2025թ. հունիսին 12-օրյա պատերազմի պատճառով միջուկային ծրագրի շուրջ բանակցությունների տապալումից հետո:

Հանդիպումը տեղի կունենա Մերձավոր Արեւելքի տարածաշրջանում ամերիկյան ռազմական ներկայության ուժեղացման ֆոնին:

Պարբերականը նշում է, որ նախատեսվող հանդիպումը վերջին օրերի ընթացքում Թուրքիայի, Եգիպտոսի եւ Քաթարի դիվանագիտական ջանքերի արդյունքն է:

Նշվում է, որ փետրվարի 2-ին տեղի ունեցած հեռախոսազրույցների ընթացքում Թուրքիայի, Սաուդյան Արաբիայի եւ Եգիպտոսի արտգործնախարարներն Արաղչիի հետ քննարկել են հնարավոր հանդիպումը:

ԽԱԽՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԷԹԻԿԱՅԻ ԽԱԽՏՈՒՄԸ

ArmLur.am-ը հասարակական-քաղաքական գործիչ Էդգար Ղազարյանից տեղեկացավ, որ նա երեկ դիմում է ներկայացրել ՀՀ Ազգային Ժողով՝ ուղղված ԱԺ երեք խմբակցություններին՝ «Քաղաքացիական պայմանագիր», «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ», առաջարկելով ստեղծել պատգամավորական էթիկայի հարցով ժամանակավոր հանձնաժողով՝ ԱԺ պատգամավոր Արթուր Հովհաննիսյանի վարքագծի առնչությամբ:

Առիթը ԱԺ ՄԻՊ հանձնաժողովի հայտնի նիստն է, որի ընթացքում Արթուր Հովհաննիսյանը սպառնաց կտրել Էդգար Ղազարյանի լեզուն եւ ականջները:

Մինչդեռ պատգամավորի գործունեության եւ երաշխիքների մասին ՀՀ օրենքում գրված է, որ պատգամավորը պարտավոր է «հարգալից վերաբերմունք ցուցաբերել քաղաքական ընդդիմախոսների, Ազգային Ժողովում հարցերի քննարկման մասնակիցների, լրագրողների, ինչպես նաեւ բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ պատգամավորը շփվում է իր լիազորություններն իրականացնելիս»:

Փաստեր.

• Դիմումում հիշատակվում է 2023թ. ապրիլի 4-ի՝ ԱԺ Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի արտահերթ նիստը, որի ընթացքում հնչել են վիրավորական արտահայտություններ:

• Դիմողի ներկայացմամբ՝ ինքը 2023թ. մայիսի 2-ին հայց է ներկայացրել դատարան:

• 2025 թ. փետրվարի 27-ի վճռով դատարանը մասամբ բավարարել է հայցը՝ պարտավորեցնելով ներողություն խնդրել հրապարակային տեքստով եւ այն հրապարակել՝ YouTube-ում սկզբնապես տարածած էջերով (նշվում են նաեւ 1in TV-ի եւ ԱԺ պաշտոնական էջերը):

• Նույն վճռով սահմանվել է 1,000,000 դրամ ոչ նյութական վնասի հատուցում, ինչպես նաեւ 200,000 դրամ փաստաբանի վարձատրություն եւ 50,000 դրամ պետական տուրք:

• 2025թ. հոկտեմբերի 24-ին վերաքննիչ դատարանը թողել է վճիռն անփոփոխ:

• Դիմումում նշվում է, որ 2025թ. դեկտեմբերի 18-ին փոխանցվել է 1,250,000 դրամ՝ ԱԿԲԱ ԲԱՆԿ-ում դիմողին պատկանող հաշվեհամարին, սակայն ներողության հրապարակման պահանջը չի կատարվել:

• Ըստ ներկայացված տվյալների՝ 2026թ. հունվարի 19-ին հարուցվել է կատարողական վարույթ, սահմանվել է 7-օրյա ժամկետ (մինչեւ 2026թ. հունվարի 26-ը), որը, ըստ դիմողի, նույնպես չի կատարվել:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Էդգար Ղազարյանն իր դիմումով առաջարկում է ԱԺ կանոնակարգով նախատեսված ընթացակարգով ստեղծել ժամանակավոր հանձնաժողով՝ պատգամավորական էթիկայի հարցով: Հանձնաժողովը պետք է քննի թմրանյութի գործով անցած Արթուր Հովհաննիսյանի վարքը, դատավճռի չկատարումը, քանի որ նա ցուցաբերել է պատգամավորին ոչ հարիր վարքագիծ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է

Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանին է ներկայացվել Քրեակատարողական ծառայության 2025 թվականի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը: Ըստ այդմ՝

2025 թվականի ընթացքում բարելավվել է ավելի ցածր անվտանգային գոտիներ եւ պայմաններ տեղափոխելու վիճակագրական պատկերը:

Բարելավվել են ազատազրկված անձանց պահման պայմանները եւ ծառայողների աշխատանքային պայմանները՝ վերանորոգվել են մեծ թվով խցեր եւ կացարաններ, սանհանգույցներ, մարզասենյակներ, աշխատասենյակներ եւ այլն:

Ընդլայնվել է ազատազրկված անձանց աշխատանքային զբաղվածության շրջանակը:

Բարելավվել է վերասոցիալականացման միջոցառումներին ազատազրկված անձանց ներգրավվածության ցուցանիշը:

Իրականացվել են հանրակրթական, բուհական, հետբուհական եւ ոչ ֆորմալ կրթական ծրագրեր:

2026թ.-ի համար նախանշվել են՝

պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի վերանայում,

ՔԿՀ-ների պարագծի անվտանգության ապահովման մոդելի վերանայում,

ազատությունից զրկված անձանց ուղեկցումների ամբողջական իրականացում,

ատեստացիայի նոր ձեւաչափի մշակում,

բոլոր ՔԿՀ-ներում էլեկտրոնային հսկողության իրականացում:

ՀԱՆԴԻՊԵԼ Է

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Ռուստամ Բաքոյանը փետրվարի 2-ին հանդիպել է Հայաստանում եզդիական համայնքի ներկայացուցիչների հետ, որոնց թվում էին եզդիական հոգեւոր խորհրդի եւ «Եզդիների ազգային միություն» ՀԿ-ի ղեկավարները, ապրիլյան պատերազմում զոհված Քյարամ Սլոյանի մայրը, Քյարամ Սլոյանի անվան կամավորական ջոկատի մարտիկները, ինչպես նաեւ վարչական շրջանների ղեկավարներ: Ռուստամ Բաքոյանը կարեւորել է համայնքի հետ պարբերաբար հանդիպումները, որոնց ընթացքում հնարավոր է լինում տեղեկանալ համայնքի ներկայացուցիչներին հուզող հարցերի մասին եւ փորձել դրանք քննարկել համապատասխան ատյանների պատասխանատուների հետ:

Ներկաները բարձրաձայնել են համայնքի առանձնահատկություններից բխող որոշ հարցերի վերաբերյալ իրենց մտահոգությունները, որոնց շուրջ էլ քննարկում է ծավալվել: Հյուրերը նշել են, որ հնչած հարցերի մասով համայնքն ունի միասնական դիրքորոշում:

Հանդիպմանը քննարկվել են նաեւ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր: Համայնքի ներկայացուցիչները խոսել են Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում եզդիերեն ամբիոն ունենալու անհրաժեշտության մասին:

Ռուստամ Բաքոյանն էլ անդրադարձել է համայնքին առնչվող իր հեղինակած օրենսդրական նախաձեռնություններին:

Զրուցակիցներն առաջիկայում կրկին հանդիպելու պայմանավորվածություն են ձեռք բերել:

ԻՐԱՎԱԿԱՆ ՎՃԻՌ

ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆԻ ԾԵԾՈՂՆԵՐԸ ԱՆՄԵՂ ԵՆ ՃԱՆԱՉՎԵԼ

Ինչպես հայտնի է՝ Նարեկ Ասատրյանին, Արտաշես Ղահրամանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք 2023 թվականի հոկտեմբերի 20-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, խմբի կազմում կատարել էին խուլիգանություն:

2023թ. հոկտեմբերի 23-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, մասնակցելով ք. Երեւան, Նաիրի Զարյան 17 հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկայացուցչության վարչական շենքի մոտ իրականացվող հավաքին եւ տեսել են Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավար Կարեն Շահրամանյանին: Նրանք քննությամբ դեռեւս հստակ չպարզված հարցի շուրջ վիճաբանել են վերջինիս հետ եւ քննությամբ դեռեւս չպարզված անձանց հետ խմբի կազմում իրավական եւ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով եւ համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ հայհոյանքներ եւ անպարկեշտ արտահայտություններ հնչեցնելով, անտեսելով հասարակական կարգի ապահովման համար ծառայություն իրականացնող ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների ներկայությունը, մարդկանց անդորրը խախտելով, ինչպես նաեւ հարակից հատվածում գտնվող հասարակական նշանակության օբյեկտների բնականոն աշխատանքը խոչընդոտելով, կատարել են խուլիգանություն, որի ընթացքում ձեռքերով հարվածներ հասցրել Կարեն Շահրամանյանին:

Նախաքննության փուլում վերջիններս կալանավորվել էին, սակայն կարճ ժամանակ անց Արտաշես Ղահրամանյանը ազատ արձակվեց, եւ գործը քննվում էր դատարանում:

Արդյունքում՝ դատարանը որոշել է ճանաչել եւ հռչակել Արտաշես Երջանիկի Ղահրամանյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով ներկայացված մեղադրանքում՝ մեղսագրվող արարքը նրա կողմից կատարված չլինելու պատճառաբանությամբ: Արտաշես Երջանիկի Ղահրամանյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ վարչական հսկողությունը, վերացնել: Ճանաչել եւ հռչակել Նարեկ Օնիկի Ասատրյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով ներկայացված մեղադրանքում՝ մեղսագրվող արարքը նրա կողմից կատարված չլինելու պատճառաբանությամբ:

Դատախազը որոշումը բողոքարկել է ՀՀ վերաքննիչ դատարան, սակայն վերաքննիչ դատարանը եւս առաջին ատյանի դատարանի որոշումը թողել է անփոփոխ: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ գործը հասել է Վճռաբեկ դատարան:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋԸ

Գլխավոր դատախազությունը 2025 թվականի դեկտեմբերի 30-ին հայտարարել էր, որ մեկնարկել են Սեւանա լճի ափամերձ տարածքներում՝ բացարձակ նիշից ցածր հողամասերում, ապօրինի կառուցված շենք-շինությունների ապամոնտաժման աշխատանքները: Դատախազությունը միաժամանակ տեղեկացրել էր, որ ապօրինի շինությունների քանդման աշխատանքները շարունակվելու են 2026 թվականին:

2026 թվականի փետրվարի 2-ին ապամոնտաժվել են ՀՀ ոստիկանության նախկին պետ Վլադիմիր Գասպարյանի կողմից ապօրինի կառուցված Սեւանի առանձնատան (Դատախազությունը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցով, ի թիվս այլնի, պահանջում է Վլադիմիր Գասպարյանից ու նրան փոխկապակցված անձանցից բռնագանձել այս առանձնատունը)՝բացարձակ նիշից ցածր գտնվող պարիսպը, բետոնե հենապատերը, թեքահարթակը եւ այլ շինություններ:

2025 թվականի դեկտեմբերից առ այսօր՝ Դատախազության միջնորդագրերի կատարման արդյունքում, Սեւանա լճի ափամերձ՝բացարձակ նիշից ցածր 14 հողամասերում ապամոնտաժվել (քանդվել) է տարբեր անձանց կողմից ապօրինի կառուցված՝ հիմնական եւ ոչ հիմնական շուրջ 40 շենք-շինություն, «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից լուծվել (դադարեցվել է) 2 պայմանագիր:

Հիշեցնենք, որ վերոնշյալ միջնորդագրերից բացի, 2025 թվականի ընթացքում Շրջակա միջավայրի նախարարությանը եւ «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ-ին Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության եւ Գեղարքունիքի մարզի դատախազության կողմից հասցեագրվել է եւս 8 միջնորդագիր: Վերոնշյալ միջնորդագրերը եւ, դրանցից բացի, Դատախազության կողմից դատարան ներկայացված հայցերը, ի թիվս այլոց, վերաբերում են.

Ոստիկանության նախկին պետ Վլադիմիր Գասպարյանի կողմից ապօրինի կառուցված Սեւանի առանձնատանը (Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոց 97 հասցե),

«Հարսնաքար» հյուրանոցի վարչական համալիրին (Սեւան քաղաքի Երեւանյան խճուղի 50 հասցե), «Հարսնաքար» հյուրանոցի քոթեջներին (Սեւան քաղաքի Երեւանյան խճուղի 48/6 հասցե),

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախկին նախագահ, ՀՀ Ազգային Ժողովի նախկին պատգամավոր Ռուբեն Հայրապետյանի կողմից ապօրինի կառուցված Սեւանի առանձնատանը (Սեւան քաղաքի Հանգստի գոտի 3-րդ փողոց 38 հասցե),

ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանի կողմից ապօրինի կառուցված Սեւանի առանձնատանը (Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոցի 71 հասցե),

«Կապավոր» ՍՊ ընկերության տնօրենների խորհրդի նախագահ Արման Հակոբջանյանի կողմից ապօրինի կառուցված Սեւանի առանձնատանը (Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի 1-ին փողոց 88 հասցե):

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության եւ Գեղարքունիքի մարզի դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքում, հանցագործության մասին հաղորդումներ են ուղարկվել նախաքննական մարմիններ, նախաձեռնվել են քրեական վարույթներ:

ՄԵՂԱԴՐԱՆՔԸ ԱՆՀԻՄՆ Է

Երեւանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչության նախկին պետ Վազգեն Հարությունյանը, ում լիազորությունները կասեցվել են, հայտնում է. «Չեմ ընդունում առաջադրված մեղադրանքը եւ այն համարում եմ անհիմն: Հարցը վերաբերում է 2023թ. Երեւանում ճանապարհային նշանների տեղադրման մրցույթում հաղթող ճանաչված «Իմպեքս» ՍՊԸ-ին, որի պայմանագիրը միակողմանի լուծվել է օրենքի ուղիղ պահանջով՝ բանկային երաշխիքը չներկայացնելու պատճառով: Գործընթացը չձախողելու նպատակով նախաձեռնել եմ նոր մրցույթ: Մոտ 1 շաբաթ անց ստացել եմ դատական ակտ, որով արգելվում է Երեւանի քաղաքապետարանին ճանապարհային նշանների տեղադրման նոր գնման գործընթաց նախաձեռնել:

Ստացվում է՝ ես, մինչեւ դատական ակտը ստանալը, պետք է իմանայի նման ակտի մասին եւ չնախաձեռնեի»:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԶԵՆՔ-ԶԻՆԱՄԹԵՐՔ

Քրեական ոստիկանության Արմավիրի մարզային վարչության ծառայողները հունվարի 29-ին օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ Մյասնիկյան գյուղի 39-ամյա բնակիչը թմրամիջոց եւ ապօրինի զենք-զինամթերք է պահում: Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված զննությամբ 39-ամյա տղամարդու տանը հայտնաբերվել է մարիխուանա տեսակի թմրամիջոցի նմանվող զանգվածով 2 փաթեթ, իսկ արհեստանոցում՝ կարճեցված մեկփողանի ողորկափող հրացան, սվին-դանակ, հակագազեր եւ զինվորական այլ պարագաներ: Կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին: Հիշեցնենք, որ ապօրինի զենք-զինամթերքը կամավոր հանձնող անձինք ազատվում են քրեական պատասխանատվությունից:

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ ԵՆ

Հունվարի 31-ին՝ ժամը 14:40-ին, Հանրապետության հրապարակում, Ոստիկանության գվարդիայի ծառայողներին փողոցային երաժիշտ ներկայացած մի տղամարդ, մատնացույց անելով երկու վազող երիտասարդի, հայտնել է, որ նրանք իր պայուսակից բացահայտ հափշտակել են գումար: Գվարդիայի ծառայողները երիտասարդներին հետապնդել են, բռնել Տիգրան Մեծի պողոտայում, կողոպուտի կասկածանքով ձերբակալել ու ներկայացրել Համայնքային ոստիկանության Կենտրոնական բաժին: 18-ամյա երիտասարդներն ու կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին: Հանգամանքները պարզվում են:

ԹՄՐԱՄԻՋՈՑԻ ԻՐԱՑՈՒՄ

ՊԾ Գեղարքունիքի մարզի գումարտակի ջրային պարեկները հունվարի 26-ին Երեւան-Սեւան-Իջեւան ճանապարհի 62-րդ կմ-ին ստուգման նպատակով կանգնեցրել են «ՎԱԶ-217020» մակնիշի մի մեքենա: Ստուգման ընթացքում պարզվել է, որ մեքենայի սրահի ակնհայտ տեսանելի հատվածներում մարիխուանա տեսակի թմրամիջոցի նմանվող զանգվածներ կան: Վարորդը ձերբակալվել եւ մեքենայով հանդերձ տեղափոխվել է Համայնքային ոստիկանության Սեւանի բաժին: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել են թմրամիջոցի նմանվող զանգվածով փաթեթ եւ կիսամոխրացած հետքերով կաթուցիչ: Պարզվել է, որ Աշտարակի բնակիչ 23-ամյա երիտասարդը իրացնելու նպատակով տելեգրամյան ալիքի միջոցով ձեռք է բերել թմրամիջոցի զանգվածով 42 փաթեթ, որոնց մի մասը տեղադրել է Երեւան-Սեւան-Իջեւան ճանապարհի՝ Սեւանի վարչական տարածքի տարբեր հատվածներում, իսկ մի մասը գտնվում է հատուկ պահպանվող տարածք տեղափոխված «ՎԱԶ-217020»-ի մեջ: Նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում կատարված զննությամբ Սեւան-Իջեւան ճանապարհի 57-րդ կմ հատվածում հայտնաբերվել է մարիխուանա տեսակի թմրամիջոցի 21 փաթեթ: Նույն զանգվածով 21 փաթեթ հայտնաբերվել է նաեւ հատուկ պահպանվող տարածք տեղափոխված «ՎԱԶ-217020»-ի խուզարկությամբ: Աշտարակ քաղաքի բնակիչ 23-ամյա երիտասարդը կալանավորվել է: Նախաքննությունը շարունակվում է:

Հունվարի 26-ից փետրվարի 2-ը Երեւանի պարեկները հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 5823 խախտում՝ պահպանվող հատուկ տարածք տեղափոխելով 155 ավտոմեքենա:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ՍԿՍՎԵԼ

Նիկոլ Փաշինյանի իշխանությունը որպես իր կողմից իրականացված հաջողված ծրագիր է ներկայացնում «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագիրը, սակայն իրականում այդ ծրագիրը դրանում ընդգրկված դպրոցների, մանկապարտեզների թվերի ու կրթական այդ հաստատությունների շենքերի նորոգման, կառուցման ժամկետների իրականացման առումով ձախողված է:

2025 թվականի դեկտեմբերի 25-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել, թե կառավարության կողմից իրականացվող «300 մանկապարտեզ, 500 դպրոց» ծրագրի շրջանակներում Տավուշի մարզում հանրակրթական որ դպրոցների շենքերն են կառուցվում, հիմնանորոգվում: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Ավարտվել է Կիրանցի հիմնական եւ Գանձաքարի միջնակարգ դպրրոցների կառուցումը: Կառուցվում են Աղավնավանքի միջնակարգ, Լուսաձորի հիմնական, Սեւքարի միջնակարգ, Նոյեմբերյանի թիվ 2 հիմնական, Այրումի միջնակարգ, Բագրատաշենի թիվ 1 միջնակարգ, Պտղավանի միջնակարգ, Ռովեղի միջնակարգ, Նորաշենի միջնակարգ, Նավուր միջնակարգ դպրոցները: 2026թվականին կսկսվի Կոթիի, Ոսկեվանի, Կողբի, Այգեձորի, Արծվաբերդի, Գոշի նոր դպրոցների կառուցումը»:

«300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագիրը նախատեսված է ավարտել 2026թ. սեպտեմբերին, սակայն Տավուշի մարզում այդ ծրագրով շատ դպրոցների շինարարությունը հիմքերից կամ դրանց առաջին հարկից վերեւ չի բարձրացել, տարիներ են հարկավոր այդ կրթօջախների շինարարությունն ավարտելու համար: Այս տարի ծրագիրն ավարտվում է, սակայն Կոթիի, Ոսկեվանի, Կողբի, Այգեձորի, Արծվաբերդի, Գոշի դպրոցների շինարարությունը նախատեսված է այս տարի սկսել, այս տարի դրանք կսկսվե՞ն: «300 դպրոց եւ 500 մանկապարտեզ» ծրագրով որեւէ դպրոցի գործարկում բազմիս տարփողվում է իշխանության կողմից՝ չհայտնելով, թե ծրագիրն ինչքան է նախատեսված ժամկետից ուշացել:

ՆՈՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Դեբեդի հովտի այգեգործներն ասում են, որ անցած տարի արքայանարնջի՝ կորոլյոկի լավ բերք է եղել: Սակայն դժվարություններ կային բերքի իրացման գործում: Միրգը հավաքող, այն Ռուսաստան արտահանողներ, նաեւ Հայաստանի շուկաներում իրացնողներ կային: Վատն այն է, որ Դեբեդի հովտի այգիներում տարածվել է կորոլյոկի նոր հիվանդություն, որը պտղաբույծները կորոլյոկի ռախիտ են կոչում: Նոյեմբերյան համայնքի Դեղձավան գյուղի պտղաբույծները հայտնեցին, որ 2025թ. բերքի 60-70 տոկոսը այդ հիվանդությամբ վարակված էր:

Գյուղատնտեսական երկիր Հայաստանում գյուղնախարարություն չկա: Գյուղատնտեսական մի քանի վարչություններ գործում են էկոնոմիկայի նախարարության կազմում: Սակայն դրանք ի՞նչ են անում բույսերի հիվանդությունների դեմ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

«ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻՆ ԱՆՀԱՊԱՂ ԱԶԱՏՈՒՄ»

Ազգային Ժողովի «Հայաստան» խմբակցությունը փետրվարի 5-ին կայանալիք Աժ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նիստում կառաջարկի «Հայաստանի Հանրապետությունում առկա քաղբանտարկյալների եւ նրանց խախտված իրավունքների վերականգնման մասին» հայտարարության նախագիծ:

Հայտարարության մասին Ազգային Ժողովում կզեկուցի խմբակցության պատգամավոր Էլինար Վարդանյանը:

Նախագծին կից փաստաթղթերում ասվում է. «ՀՀ-ում արձանագրվող ժողովրդավարության հետընթացը, որի բաղկացուցիչ մասն են կազմում խոսքի, խղճի, հավաքների ազատությունների կոպիտ ոտնահարումները, ՋԼՄ-ների հանդեպ ճնշումները, շինծու քրեական գործերը քաղաքական այլ հայացքներ ունեցող գործիչների եւ քաղաքացիների նկատմամբ, ընտրովի արդարադատությունը, կոռուպցիայի ահագնացող մակարդակը, դրսեւորվում է նաեւ աննախադեպ թվով քաղաքական բանտարկյալների առկայությամբ:

Իշխանությունը վերածվել է քաղաքական հետապնդումների, հալածանքների եւ հաշվեհարդարի բացահայտ գործիքի: Իշխող վարչախմբի գործողություններն ուղղված են երկրում վախի մթնոլորտ սերմանելուն, իշխանությունն ամեն գնով պահելուն, որոնք հանգեցնելու են իրավական պետության հիմքերի խաթարման ու սահմանադրականության վերջնական տապալմանը»:

Թվարկելով այս գործողություններից տուժած անձանց ոլորտները, այդ թվում Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցին ներկայացնող արքեպիսկոպոսներ, հոգեւոր սպասավորներ եւ ծառայողներ, հայրենիքի պաշտպանության գործում իրենց կյանքը նվիրաբերած զինծառայողների ընտանիքի անդամներ եւ հարազատներ, ընդդիմադիր քաղաքական կուսակցությունների ղեկավար մարմինների եւ երիտասարդական միությունների անդամներ, քաղաքական եւ քաղաքացիական գործունեություն իրականացնող եւ այլ անձինք, արձանագրվում է, որ հայտարարությամբ պահանջվում է քաղբանտարկյալներին անհապաղ ազատ արձակել եւ հայտարարությունն ընդունել իբրեւ կոչ:

Նշենք նաեւ, որ հայտարարության ընդունման հրատապությունը պայմանավորված է ՀՀ-ում ստեղծված իրավական եւ ժողովրդավարական ակնհայտ հետընթացի եւ օրեցօր ահագնացող քաղաքական բռնաճնշումների հանգամանքներով:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԵՍԿՈՎԸ ԲԱՑԱՏՐԵԼ Է

Ռուսաստանի նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովն Աբու Դաբիում ռուս-ուկրաինական հակամարտության լուծման շուրջ նոր հանդիպման հետաձգումը բացատրել է մասնակիցների ժամանակացույցի հետ կապված անհամապատասխանություններով: Այս մասին հաղորդում է «ՌԻԱ Նովոստի» գործակալությունը:

«Անվտանգության հարցերով խմբի աշխատանքի երկրորդ փուլը նախատեսված էր նախորդող կիրակի օրը, սակայն անհրաժեշտ էին լրացուցիչ ճշգրտումներ՝ երեք կողմերի ժամանակացույցերը համապատասխանեցնելու համար», - ասել է նա:

Նշվում է, որ հանդիպման ամսաթվերը փետրվարի 4-5-ն են:

Պեսկովի խոսքով՝ ՌԴ-Ուկրաինա հակամարտության կարգավորումը բարդ եւ բազմակողմանի գործընթաց է. կողմերին հաջողվել է ընդհանուր հայտարարի գալ որոշ հարցերի շուրջ, սակայն դեռեւս կան այնպիսի հարցեր, որոնց շուրջ կարծիքները չեն համընկնում:

«Այնուամենայնիվ, Ռուսաստանը բաց է մնում բանակցությունների համար եւ պատրաստ է շարունակել աշխատանքը», - նշել է նա:

Խոսելով բարձր մակարդակի հանդիպման մասին՝ Պեսկովն ընդգծել է, որ այն կարող է անցկացվել միայն Մոսկվայում:

Հունվարի վերջին Աբու Դաբիում տեղի է ունեցել եռակողմ աշխատանքային խմբի բանակցությունների առաջին փուլը, որին մասնակցել են ռուս եւ ուկրաինական պատվիրակությունները եւ ամերիկացի ներկայացուցիչներ: Փակ դռների հետեւում կողմերը քննարկել են Վաշինգտոնի կողմից առաջարկվող խաղաղության ծրագրի չլուծված հարցերը:

Հաջորդ բանակցությունները սկզբնապես նախատեսված էին փետրվարի 1-ին:

ԿԱԼԱՆՔԸ ՀԵՏԱՁԳՎԵՑ

Երեւանի ընդհանուր իրավասության դատարանի Կենտրոնի նստավայրում քննվեց Արշակ սրբազանի կալանքի երկարացման միջնորդության հարցը: Դատավոր Կարեն Ֆարխոյանը որոշեց Արշակ սրբազանի կալանքը երկարաձգել եւս 2 ամսով:

Հիշեցնենք, որ Արշակ Սրբազանը 2025թ. դեկտեմբերի 5-ին կալանավորվել է երկու ամիս ժամկետով: Սրբազանին մեղադրում են, թե իբր վերջինս 2018-ին Վեհափառի դեմ ակցիա իրականացնողներից մեկին վարկաբեկելու նպատակով պայուսակում թմրամիջոց է դրել:

ՔԿ-ից հայտնել էին. «Քրեական վարույթի նախաքննության ընթացքում անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում Քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 4-րդ կետերով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ թմրամիջոց ապօրինի իրացնելը՝ հանդիսադիր վայրում)»:

ՆՈՐ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

«Հյուսիս-հարավ» ճանապարհի շինարարության շրջանակներում ամբողջությամբ ավարտվել են դեպի Գյումրի գնացող հատվածի շինարարական աշխատանքները: Այս մասին հայտարարեց ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանը փետրվարի 3-ի ամփոփիչ ասուլիսի ժամանակ:

Այդ հատվածում առաջիկա օրերին կավարտվեն նաեւ լուսավորության ցանցի անցկացման աշխատանքները: Ցանցը, որպես այդպիսին, արդեն անցկացված է, հիմա միացումները կլինեն, որից հետո ճանապարհն ամբողջությամբ կհանձնվի շահագործման»,-ասաց Խուդաթյանը: Նրա տեղեկատվությամբ՝ հարավային հատվածում ինտենսիվ շինարարական աշխատանքներ են իրականացվել: Մասնավորապես՝ Քաջարան-Ագարակ հատվածում ներկա պահին կատարողականը կազմում է ավելի քան 40 տոկոս:

«Այս պահին այդ շինարարությունը համարվում է Հայաստանում ամենամեծը, եւ 2025 թվականի ընթացքում մենք այնտեղ միջինը օրական շուրջ 65 միլիոն դրամի իրականացված աշխատանք ենք ունեցել, շուրջ 700 աշխատակից է այնտեղ աշխատել եւ ավելի քան 240 միավոր տեխնիկա»,-մանրամասնեց նախարարը: Ըստ Խուդաթյանի՝ նշված հատվածում արդեն ավարտվել են 2 թունելներից մեկի փորման աշխատանքները, իսկ մյուսինը կատարվել է զգալի չափով: Գերատեսչության ղեկավարը նշեց, որ դրանցից մեկը վերջին 30 տարում զրոյից փորված եւ ամենաերկար թունելն է համարվում Հայաստանում: Այդ հատվածում նախատեսված է նաեւ 15 կամրջի շինարարություն, որոնցից 14-ի մասով ներկայում աշխատանքներ են իրականացվում:

Ամփոփվել է Քաջարանի թունելի կառուցման մրցույթը, իսկ առաջիկայում կկնքվի համապատասխան պայմանագիրը: Զուգահեռ աշխատանքներ են տարվում թունելին մոտեցող հատվածում: Խուդաթյանի խոսքով՝ Քաջարանի թունելի բուն շինարարական աշխատանքները կմեկնարկեն 2026թ.:

● *Անցած 3 օրում գրանցվել է 28 ավտովթար. 1 մարդ մահացել է, 35-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՆԱՍԱ–Ն ՀԵՏԱՁԳԵԼ Է

ԱՄՆ Օդագնացության եւ տիեզերական տարածության հետազոտությունների ազգային գործակալությունը (ՆԱՍԱ) հայտարարել է, որ հետաձգում է «Արտեմիս 2» տիեզերանավի առաջին թռիչքը, որը նախատեսված էր փետրվարին: Այս մասին X սոցիալական հարթակում հայտնել է ՆԱՍԱ-ի ադմինիստրատոր Ջարեդ Այզեքմենը:

Պատճառն այն է, որ փորձարկումների ընթացքում մի շարք խնդիրներ են ի հայտ եկել: Մասնավորապես, ինժեներները ջրածնի արտահոսք են հայտնաբերել Space Launch System (SLS) երկաստիճան գերծանր կրող հրթիռի հիմքում: Ըստ Այզեքմենի՝ «Արտեմիս 2-»-ի հնարավոր ամենավաղ մեկնարկը կլինի մարտին: Այն չորս տիեզերագնացներով պետք է անվայրէջք թռիչք կատարի դեպի Լուսին: Ավելի վաղ ՆԱՍԱ-ն արդեն հետաձգել էր տիեզերանավի՝ փետրվարի 6-ին նախատեսված թռիչքը՝ եղանակային պայմանների պատճառով: Թռիչքը պետք է տեղի ունենար փետրվարի 8-ին:

ԱՄԷ–Ի ԿՈՉԸ ԱՄՆ–ԻՆ ԵՎ ԻՐԱՆԻՆ

Իրանն ու ԱՄՆ-ն պետք է համաձայնության հասնեն միջուկային ոլորտում, այլ ոչ թե հերթական հակամարտությունը հրահրեն Մերձավոր Արեւելքում: Այս մասին Դուբայում անցկացվող Համաշխարհային կառավարական գագաթնաժողովի ժամանակ հայտարարել է ԱՄԷ նախագահի դիվանագիտական խորհրդական, դոկտոր Մուհամմեդ Անվար Գարգաշը: Այս մասին գրում է The National-ը: «Կարծում եմ՝ տարածաշրջանն առանց այդ էլ աղետալի հակամարտություններ է ապրել: Չեմ կարծում, որ մեզ եւս մեկն է պետք: Սակայն մենք կցանկանայինք տեսնել իրանա-ամերիկյան ուղիղ բանակցություններ, որոնք կհանգեցնեն փոխըմբռնման»,- ասել է նա: Նաեւ ընդգծել է, որ չլուծված հարցերը, այդ թվում՝ Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ, շարունակում են ապակայունացնել տարածաշրջանը: Միեւնույն ժամանակ, նա հրաժարվել է ենթադրություններ անել այն մասին, թե ինչ նկատառումներով է առաջնորդվում ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը՝ Իրանի նկատմամբ ներկայիս քաղաքականությունը վարելով:

Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանն ավելի վաղ X սոցիալական ցանցում գրել էր, որ երկրի ԱԳՆ-ին հանձնարարել է ԱՄՆ-ի հետ բանակցություններ վարել իրավահավասար պայմաններով: Axios-ը, հղում անելով տեղեկացված աղբյուրներին, հայտնել է, որ ԱՄՆ նախագահի հատուկ բանագնաց Սթիվ Ուիթքոֆը եւ Իրանի ԱԳ նախարար Աբաս Արաքչին ուրբաթ օրը Ստամբուլում կայանալիք հանդիպման ժամանակ կքննարկեն Թեհրանի միջուկային ծրագիրը:

Իրանն ու ԱՄՆ-ն արդեն անցկացրել են բանակցությունների հինգ փուլ: Վեցերորդ փուլը դեռեւս չի կայացել, քանի որ 2025 թվականի հունիսին Իսրայելը, իսկ այնուհետեւ ԱՄՆ-ն հարվածներ են հասցրել Իրանին:

IDBank

ԿՍՊ–Ն ԲԻԶՆԵՍԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒԺ

IDBank-ի սոցիալական պատասխանատվության ծրագրերի ամփոփում

2025 թվականը IDGroup-ը եզրափակում է որպես պատասխանատու բիզնեսի կայացած մշակույթ ձեւավորած կազմակերպություն: Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը (ԿՍՊ) ընկերության համար վաղուց այլեւս կամավոր նախաձեռնություն չէ. այն ռազմավարական ուղղություն է, որի վրա կառուցվում են երկարաժամկետ նպատակներն ու գործընկերային հարաբերությունները:

IDGroup-ի բաժնետեր Լալա Բախշեցյանի խոսքով՝ ԿՍՊ-ն այսօր ընկերության ռազմավարության անբաժանելի մասն է, որն ընկալվում է յուրաքանչյուր աշխատակցի կողմից: 2025 թվականին իրականացված ծրագրերը վկայում են, որ ԿՍՊ-ն ոչ միայն սոցիալական ազդեցություն է ստեղծում, այլեւ նպաստում է բիզնեսի կայուն զարգացմանը:

ԿՍՊ ռազմավարություն՝ ազդեցության լայն շրջանակով

2025-ին IDGroup-ը իրականացրել է համապարփակ ԿՍՊ ռազմավարություն՝ ուղղված ֆինանսական կրթության եւ թվային գրագիտության զարգացմանը, մարզերի եւ ՓՄՁ-ների աջակցությանը, ներառականությանը, սոցիալական խնդիրների լուծմանը, բնապահպանությանը եւ աշխատակիցների բարեկեցությանը: Ընտրված ուղղությունները բխում են ընկերության կորպորատիվ արժեքներից եւ միտված են հասարակության ներկա ու ապագա կարիքների բավարարմանը:

Տարվա ընթացքում իրականացված ծրագրերի ամենամեծ ազդեցությունն ապահովել են «Մի դրամի ուժը», «Կողք կողքի» եւ «Ֆինանսապես գրագետ Իդրամի եւ IDBank-ի հետ» նախաձեռնությունները:

«Մի դրամի ուժը»՝ համատեղ ազդեցության օրինակ

2025 թվականին IDBank-ը եւ Իդրամը «Մի դրամի ուժը» նախաձեռնության շրջանակում ֆինանսավորել են 12 սոցիալական ծրագիր՝ ավելի քան 60 մլն դրամ ընդհանուր ծավալով, իսկ Մի դրամի ուժի՝ 5 տարվա գումարն արդեն գերազանցում է 260 մլն-ը: 2025-ին իրականացված ծրագրերը ընդգրկել են կրթության, տեղեկատվական տեխնոլոգիաների, ներառական միջավայրի, բնապահպանության, ֆինանսական գրագիտության, ինչպես նաեւ պատերազմի մասնակիցների եւ խոցելի խմբերի աջակցության ոլորտները: Նախորդ տարվա ցուցանիշի համեմատ օգտատերերի վճարումների քանակն աճել է ավելի քան 20%-ով:

Գիտելիքը՝ կայուն ապագայի հիմք

Ֆինանսական կրթությունն ու թվային գրագիտությունը IDGroup-ի ԿՍՊ քաղաքականության առանցքային ուղղություններից են: «Ֆինանսապես գրագետ Իդրամի եւ IDBank-ի հետ» արշավը 2025-ին ընդգրկել է շուրջ 1500 մասնակցի՝ 25 սեմինարների եւ վեբինարների միջոցով: Միջոցառումներն իրականացվել են ՀՀ բոլոր մարզերում՝ դպրոցների, ճամբարների եւ կրթական կառույցների հետ համագործակցությամբ: Արշավը նպաստել է ոչ միայն ֆինանսական հմտությունների զարգացմանը, այլեւ զեղծարարություններից պաշտպանվելու վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը: Երեխաների ֆինանսական գրագիտությանը նպաստելու համար Idram Junior հավելվածում ստեղծված Junius ֆինանսական գրագիտության խաղը հատուկ դերակատարություն ունի. ամեն ամիս երեխաները ստանում են մրցանակներ խաղալու եւ ֆինանսական ոլորտում գիտելիքներ ձեռք բերելու համար:

Ուժեղ համայնքներ, կայուն տնտեսություն

IDGroup-ը կարեւորում է մարզերի համաչափ տնտեսական զարգացումն ու ՓՄՁ-ների հզորացումը: 2025-ին Իդրամ QR-ով վճարելու հնարավորությունը հասել է 26,000 վաճառակետի սահմանը: Ուրախալի է, որ նշված թվի 40%-ը գտնվում է մարզերում: Տարվա ընթացքում IDBank-ն ընդլայնել է մասնաճյուղային ցանցը՝ ներկայություն ապահովելով մի շարք մարզերում, իսկ օնլայն բանկինգի միջոցով ծառայությունները հասանելի են ողջ հանրապետությունում:

Տարվա կարեւոր ձեռքբերումներից են Իդրամի ռազմավարական համագործակցությունները Bybit-ի եւ Alipay-ի հետ, որոնք հնարավորություն են տվել զբոսաշրջիկներին Հայաստանում կատարել QR վճարումներ՝ նպաստելով հատկապես մարզերում առեւտրի եւ հյուրընկալության ոլորտների ակտիվացմանը:

Հավասար հնարավորություններ բոլորի համար

Ներառականությունը IDGroup-ի համար սկզբունքային արժեք է: 2025-ին իրականացվել են աշխատակիցների վերապատրաստումներ եւ շուրջ 15 մլն դրամի ներդրումներ ներառական միջավայրի զարգացման ուղղությամբ՝ «ՔայլՏեք», «Հերոսների վերականգնողական քաղաք» եւ «Հույսի կամուրջ» ՀԿ-ների ծրագրերի միջոցով: Ծրագրերի ազդեցությունը հասել է 513 շահառուի:

Սոցիալական աջակցություն՝ մարդակենտրոն մոտեցմամբ

IDBank-ի «Կողք կողքի» ծրագրի շրջանակում 2025-ին իրականացվել են Արցախից տեղահանվածների կյանքի որակի բարելավմանն ուղղված 4 միջոցառում: Ծրագրերը ներառել են մասնագիտական կրթություն արցախցի կանանց համար, ֆինանսական գրագիտության դասընթացներ դպրոցականների համար, մանկապարտեզի ստեղծում Սյունիքի մարզում եւ կրթաթոշակային աջակցություն արցախցի ուսանողներին: Ընդհանուր ներդրումները կազմել են տասնյակ միլիոնավոր դրամներ եւ նպաստել են շահառուների կայունացմանն ու ինքնաբավության բարձրացմանը:

Պատասխանատվություն բնության հանդեպ

Բնապահպանական ուղղությամբ IDGroup-ը 2025-ին ներդրել է ավելի քան 10.4 մլն դրամ: Նախորդ տարիներին IDGroup ընկերությունների շնորհիվ Հայաստանի անտառային ֆոնդում տնկվել է ավելի քան 30,000 ծառ: 2025-ին իրականացված «Սիմֆոնիկ անտառ» ծրագրի արդյունքում նախատեսվում է տնկել եւս շուրջ 7,000 ծառ, իսկ Բանկերի միության եւ ՀՀ բոլոր բանկերի հետ համատեղ իրականացվող միջոցառման շրջանակում եւս 5555 ծառ: Այս համատեքստում կարեւոր է նշել, որ թվային բանկինգի եւ օնլայն գործարքների զարգացումը զգալիորեն կրճատել է թղթի եւ պլաստիկի սպառումը:

Աշխատակիցները՝ կազմակերպության առանցքում

IDGroup-ը աշխատակիցներին դիտարկում է որպես հիմնական արժեք: Ընկերությունում գործում է հավասար հնարավորությունների վրա հիմնված կադրային քաղաքականություն, արտոնությունների լայն փաթեթ եւ շարունակական զարգացման ծրագրեր: IDBank-ի IDream կրթական ծրագրի արդյունքում 2025-ին 47 շրջանավարտից 34-ը համալրել են բանկի թիմը:

Նոր նպատակներով՝ դեպի 2026

2026-ին IDGroup-ը շարունակելու է ԿՍՊ քաղաքականության խորացումն ու ազդեցության ընդլայնումը՝ կենտրոնանալով ֆինանսական եւ թվային գրագիտության, մարզերի զարգացման, ներառականության, «կանաչ» նախաձեռնությունների եւ աշխատակիցների բարեկեցության վրա՝ նպատակ ունենալով նպաստել ավելի ներառական, կրթված եւ կայուն հասարակության ձեւավորմանը:

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ ԵՆ ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԵԳՆԱՆՔՈՎ Է ԱՐՁԱԳԱՆՔԵԼ

«Ո՛Չ, ԵՍ ՀՐԵՇՏԱԿ ՉԵՄ»

Ըստ EWRONEWS-ի՝ Իտալիայի վարչապետ Մելոնին հեգնանքով արձագանքեց այն մեկնաբանություններին, որ հռոմեական բազիլիկի հրեշտակները վերականգնումից հետո զարմանալիորեն նման են իրեն:

Հռոմի թեմը պաշտոնական հայտարարություն տարածեց Լուչինայի բազիլիկում քերովբեների դեմքի նմանության վերաբերյալ վարչապետ Ջորջիա Մելոնիի հետ վերականգնումից հետո:

Եկեղեցական իշխանությունները հայտարարեցին, որ բազիլիկի վրա աշխատանքները ընթանում էին 2023 թվականից՝ «առանց փոփոխությունների կամ լրացումների» բանաձեւով, եւ որ քերովբեին Մելոնիի դիմագծերը վերականգնողի սեփական նախաձեռնությունն էր: Ռեկտոր Դանիելե Միչելետին իտալական լրատվամիջոցներին ասել է, որ չի հիշում որմնանկարում հրեշտակի բնօրինակ դեմքը, եւ որ իր համար նման տեսքը «խնդիր չէ»:

Վերականգնող Բրունո Վալենտինետին վիճաբանությունը համարում է «անհեթեթ»: «Ո՞վ ասաց, որ դա վարչապետ Մելոնին է» -հարցնում է նա,-«Քահանան դա չի ասել, նա ասել է, որ նմանություն կա»: Վերականգնողը հիշում է, որ որմնանկարը ինքն է նկարել 2000 թվականին եւ այժմ այն վերականգնել է առավելագույն ճշգրտությամբ:

Մինչդեռ Ջորջիա Մելոնին այս պատմությանը արձագանքեց հումորով:

«Ոչ, ես անկասկած հրեշտակի տեսք չունեմ», - գրել է նա սոցիալական ցանցերում: Մինչդեռ ընդդիմադիր Դեմոկրատական կուսակցությունը անցավ հարձակման՝ կոչ անելով մշակույթի նախարարին անհապաղ միջամտել Մշակութային ժառանգության օրենսգրքի խախտման գործին: Կուսակցության կարծիքով, պահպանվող ժառանգության կամայական փոփոխությունները եւ ժամանակակից «հարմարեցումները» անընդունելի նախադեպ են, որոնք գերազանցում են վերականգնման գիտական չափանիշները: Կոչին ուշադրություն դարձվեց, եւ նախարարությունը հրամայեց որմնանկարի տեխնիկական զննում: Դիտորդները, սակայն, նշում են, որ այն պահպանվող կարգավիճակ չունի, քանի որ կրկնօրինակ է:

ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ԱՇԽԱՐՀ

ԲՈՅԿՈՏ «ԵՎՐԱՏԵՍԻԼ» 2026–ԻՆ

«Եվրատեսիլ» երգի մրցույթը վաղուց արդեն ոչարզապես երաժշտական մրցույթ չէ: Տասնամյակների ընթացքում այն վերածվել է եվրոպական ինքնության, մշակութային երկխոսության եւ երբեմն՝ քաղաքական լարվածության հայելու: 2026 թվականին երգի մրցույթը կանցկացվի մայիսի 12-ին, 14-ին ու 16-ին Վիեննայում՝ հետեւելով Ավստրիան ներկայացնող JJ-ի հաղթանակին: Եւ չնայած մրցույթին դեռ մի քանի ամիս կա՝ դեռեւս նախորդ տարվանից այն արդեն հայտնվել է ուշադրության կենտրոնում՝ ոչ միայն երգերի ու շոուների, այլեւ սկանդալների, վեճերի ու հակասությունների պատճառով:

1. Իսրայելի մասնակցությունն ու բոյկոտների ալիքը

2026 թվականի «Եվրատեսիլի» շուրջ ամենախոշոր հակասություններից մեկը կապված է Իսրայելի մասնակցության հետ: Միջազգային քաղաքական լարվածության եւ հումանիտար ճգնաժամերի ֆոնին որոշ երկրներում բարձրաձայնվել են մրցույթը բոյկոտելու կոչեր:

Եվրոպական հեռարձակողների միության (EBU) որոշումը՝թույլ տալ Իսրայելի մասնակցությունը, առաջացրել է բուռն քննարկումներ ինչպես մեդիա դաշտում, այնպես էլ հասարակական շրջանակներում: Մի շարք երկրներում հասարակական կազմակերպություններն ու մշակութային գործիչները կոչ են արել վերանայել մասնակցության ձեւաչափը՝շեշտելով, որ «Եվրատեսիլը» պետք է մնա ապաքաղաքական հարթակ:

Մրցույթն արդեն բոյկոտել են Իսպանիան, Իռլանդիան, Նիդերլանդները, Սլովենիան եւ Իսլանդիան:

2. Քվեարկության շուրջ կասկածներն ու կանոնների փոփոխությունները

«Եվրատեսիլի» քվեարկության համակարգը տարիներ շարունակ քննադատության առարկա է դարձել: Բլոկային քվեարկության, քաղաքական համակրանքների եւ զանգվածային մոբիլիզացիայի մասին մեղադրանքները նոր չեն, սակայն վերջին տարիներին դրանք ավելի բարձրաձայն են հնչում:

Հանրային քվեարկության թափանցիկության վերաբերյալ կասկածները ստիպել են կազմակերպիչներին քննարկել համակարգի բարեփոխումները: Քննարկումների շրջանակում շրջանառվում են տարբեր առաջարկներ՝

- հեռուստադիտողի քվեարկության սահմանափակումներ,
- ժյուրիի դերի վերանայում,
- քվեարկության վերահսկման մեխանիզմների խստացում:

Այս քայլերը նպատակ ունեն վերականգնել վստահությունը «Եվրատեսիլի» ամենակարեւոր տարրերից մեկի՝ քվեարկության հանդեպ:

3. Պլագիատի մեղադրանքներ դեռ մրցույթից առաջ

2026 թվականի մրցույթի շուրջ սկանդալները չեն սահմանափակվել միայն քաղաքական թեմաներով: Դեռեւս նախընտրական փուլում որոշ երգեր հայտնվել են պլագիատի վերաբերյալ մեղադրանքների կենտրոնում:

Օրինակ՝ երկրպագուները կարծում են, որ Լյուքսենբուրգի ներկայացուցիչ Եվա Մարիայի Mother Nature երգը շատ նման է Birdy-ի Keeping Your Head Up երգին:

Թեեւ նման դեպքերը «Եվրատեսիլի» պատմության մեջ հազվադեպ չեն, յուրաքանչյուր նոր սկանդալ կրկին հարցականի տակ է դնում ստեղծագործական արդարությունը եւ մրցույթի հեղինակությունը:

4. Հայտնի դեմքերի հեռացումը «Եվրատեսիլից»

«Եվրատեսիլի» շուրջ ստեղծված մթնոլորտը ազդել է նաեւ նախկին մասնակիցների եւ հաղթողների վրա: Որոշ ճանաչված արտիստներ հայտարարել են, որ ժամանակավորապես կամ ընդմիշտ հեռանում են «Եվրատեսիլի» հետ կապված նախագծերից:

«Եվրատեսիլ 2024»-ի հաղթող, շվեյցարացի երգիչ Նեմոն հայտարարել է, որ կվերադարձնի իր մրցանակը՝ Իսրայելի մասնակցության թույլտվության ֆոնին: Իսկ 2014 թ-ի հաղթող Կոնչիտա Վուրսթը նշել է, որ թեեւ շնորհակալ է «Եվրատեսիլին» իր պատմության մի մասնիկը կազմելու համար, սակայն որոշել է իր հետագա ուղին շարունակել առանց մրցույթի հետ կապի:

5. Սկանդալների երկար պատմություն

«Եվրատեսիլը» միշտ էլ ունեցել է իր սկանդալները՝

- քաղաքական ենթատեքստ ունեցող երգեր,
- ժյուրիների արդյունքների չեղարկում,
- բողոքներ հարեւան երկրների միջեւ փոխադարձ քվեարկության մասին,
- բեմական շոուների շուրջ հասարակական հակասություններ:

Ի՞նչ է սպասվում «Եվրատեսիլ» 2026-ին

2026 թվականի «Եվրատեսիլը», որը համընկնում է մրցույթի կարեւոր հոբելյանական շրջանի հետ, կանգնած է լուրջ փորձության առաջ: Կկարողանա արդյոք այն կրկին հանդես գալ որպես միավորող մշակութային տոն՝ չնայած քաղաքական, հասարակական եւ մեդիա ճնշումներին:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՖԵՐ

Անգլիական «Քրիսթալ Փելասը» ձեռք է բերել «Վուլվերհեմփթոնի» նորվեգացի հարձակվող Յորգեն Ստրան Լարսենին: 25-ամյա ֆուտբոլիստի պայմանագիրը նախատեսված է մինչեւ 2030թ. հունիս: «Քրիսթալ Փելասը» Լարսենին ձեռք է բերել 43 միլիոն ֆունտ ստերլինգով, գումարած 5 միլիոն ֆունտ ստերլինգ բոնուս: Այս տրանսֆերն ամենաթանկն է լոնդոնյան ակումբի պատմության մեջ, հաղորդում է Sky Sports-ը: Ընթացիկ մրցաշրջանում Լարսենը մասնակցել է 26 հանդիպման, խփել է 6 գոլ, կատարել 2 գոլային փոխանցում:

ԲԵՆԶԵՄԱՆ ՏԵՂԱՓՈԽՎԵՑ

38-ամյա ֆրանսիացի հարձակվող Քարիմ Բենզեման Սաուդյան Արաբիայում փոխել է ակումբը: Նա «Ալ Իթիհադից» տեղափոխվել է «Ալ Հիլալ»: Գործարքի եւ պայմանագրի մանրամասները չեն նշվում: Ֆրանսիայի հավաքականի եւ Մադրիդի «Ռեալի» նախկին ֆուտբոլիստը 2023 թվականից էր հանդես գալիս «Ալ Իթիհադում»՝83 խաղում խփելով 54 գոլ: Transfermarkt-ը Բենզեմայի տրանսֆերային արժեքը գնահատում է 6 միլիոն եվրո:

ՍԱԲՈԲՈՆ «ԱԼԱՇԿԵՐՏ»–ՈՒՄ

«Ալաշկերտ»-ին է միացել Զամբիայի հավաքականի ձախ եզրային հարձակվող Ժոզեֆ Սաբոբոն: 20-ամյա ֆուտբոլիստը կարիերայի սկզբնական հատվածն անցկացրել է Զամբիայի թիմերում: 2024թ. հունվարին տեղափոխվել է շվեյցարական «Ցյուրիխ», որտեղ կես մրցաշրջան անցկացնելուց հետո տեղափոխվել է իսրայելական «Հապոել Բեր Շեւա»: Սաբոբոն Զամբիայի մինչեւ 20 տարեկանների հավաքականում անցկացրել է 4 խաղ, իսկ ազգային հավաքականում մասնակցել է 14 խաղի ու դարձել 1 գոլի հեղինակ: Սաբոբոն ազգային թիմի հետ մասնակցել է անցած ամիս Մարոկկոյում անցկացված Աֆրիկայի ազգերի գավաթի խաղարկությանը: Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի նախագահ Ջանի Ինֆանտինոն ակնարկել է, որ առաջիկայում Ռուսաստանի հավաքականները կվերադառնան միջազգային ասպարեզ:

ՊԱՐՏԱԴԻՐ ԴԻՏԱՐԿՈՒՄ

«Պարտավոր ենք դիտարկել Ռուսաստանի նկատմամբ արգելքի վերացումը: Այդ արգելքը ոչինչ չտվեց, միայն հիասթափություն եւ ատելություն առաջացրեց: Ռուսաստանի տղաների եւ աղջիկների համար Եվրոպայի այլ երկրներում ֆուտբոլ խաղալու հնարավորությունը միայն օգուտ կտար: Պետք է կանոնադրությունում ամրագրել, որ քաղաքական պատճառներով ոչ մի երկրի չի կարելի արգելել խաղալ ֆուտբոլ»,- Ինֆանտինոյի խոսքը մեջբերում է Sky News-ը: 2022թ. փետրվարից Ռուսաստանի հավաքականներն ու ակումբները զրկված են միջազգային պաշտոնական մրցումների մասնակցելու իրավունքից Ուկրաինայում ՌԴ զինված ուժերի պատերազմական գործողությունների պատճառով:

● Փետրվարի 4-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Պատվի համար» ներկայացումը: Տոմսերի արժեքը 1000-3000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Կարելի՞ է իմանալ, թե ինչպես մարել անձի վարկային պատմությունը:

Նարգիզ Սահակյան, 32 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ վարկային տեղեկատվությունը կամ այսպես կոչված «վարկային պատմությունը» վարկառուի վերաբերյալ վարկային տեղեկատվությունն է, որը բնութագրում է վերջինիս կողմից ստանձնած վարկային պարտավորությունների մասով պարտքերը, վճարումները, վճարումների սովորությունները կամ պարտավորությունների կամ դրանց կատարման վերաբերյալ տեղեկատվություններ:

Գործնականում «վատ վարկային պատմությունը մաքրել» նշանակում է ընթացիկ վարկային զեկույցներում չունենալ խնդրահարույց (ժամկետանց կամ սուբյեկտիվ չափանիշներով դասակարգված) վարկեր:

Վարկային բյուրոն չպետք է ներառի վարկային զեկույցում վարկային տեղեկատվության սուբյեկտի վերաբերյալ վարկային զեկույցի տրամադրման պահին նախորդող հինգ տարուց ավելի վարկային տեղեկատվություն:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հինգ տարին ավարտվելուց հետո նշված տեղեկատվությունը արխիվացվում է:

(«Վարկային տեղեկատվության շրջանառության եւ վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ ենթակետ):

Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ՝ եթե ՀԿ-ն ֆիզիկական անձին կրթաթոշակ է տալիս, արդյոք եկամտային հարկի պարտավորություն առաջանում է, թե ոչ:

Տաթեւ Ղարիբյան, 39 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 18 կետի համաձայն՝նվազեցվող եկամուտներ են համարվում բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, ասպիրանտներին, միջնակարգ-մասնագիտական ու պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների սովորողներին, հոգեւոր ուսումնական հաստատությունների ունկնդիրներին պետության կողմից վճարված կրթաթոշակները, ինչպես նաեւ այն կրթաթոշակները, որոնք նրանց համար նշանակում են այդ ուսումնական հաստատությունները կամ նշված հոդվածի 1-ին մասի 14-րդ եւ 15-րդ կետերում նշված կազմակերպությունները:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Այսինքն՝ ՀԿ-ի կողմից ֆիզիկական անձին նշանակված կրթաթոշակը նվազեցվող եկամուտ է հանդիսանում, եւ եկամտային հարկի պարտավորություն չի առաջանում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը Armenpress-ի

Կայացել է կոմպոզիտոր, դաշնակահար Ալեքս Սոլելիի երեւանյան համերգը:

Ալեքս Սոլելի՝ նեոկլասիկական եւ մինիմալիստական ժանրի դաշնակահար եւ կոմպոզիտոր: Ավարտել է Մոսկվայի Գնեսինների անվան Ռուսական երաժշտական ակադեմիան եւ Berklee College of Music-ը (Բոստոն):

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 4 - 8 0 - 3
Կոտայքի լեռներ	-4 - 7 0 - 3
Կոտայքի նախալեռներ	- 1 + 2 + 3 + 6
Գեղարքունիք	- 3 - 7 0 - 3
Լոռի	-2 + 2 0 + 4
Տավուշ	- 1 + 2 + 2 + 5
Արագածոտնի լեռներ	- 4 - 7 0 - 3
Արագածոտնի նախալեռներ	- 1 + 2 + 3 + 7

Արարատ	0 + 3 + 4 + 7
Արմավիր	0 + 3 + 5 + 7
Վայոց ձորի լեռներ	-3 - 6 - 1 + 2
Վայոց ձորի նախալեռներ	0 + 3 + 5 + 8
Սյունիքի լեռներ	-3 - 6 0 - 3
Սյունիքի նախալեռներ	0 - 3 0 + 3
Սյունիքի հովիտներ	+ 3 + 6 + 6 + 9
Երեւան	+ 1 + 3 + 3 + 5

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **03.02.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*